

Համազգայինի Ա.Մ.Ն. Արեւելեան Շրջանային Վարչութեան «Մինաս եւ Գոհար
Թէօլէօլեան» Ժամանակակից Գրականութեան Մրցանակ

Համազգայինի Ա.Մ.Ն. Արեւելեան Շրջանային Վարչութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, որ բացուած է «Մինաս եւ Գոհար Թէօլէօլեան» ժամանակակից գրականութեան ամենամեայ չորրորդ մրցոյթը: Նախորդ մրցոյթներուն նման, նախատեսուած են երկու մրցանակներ, մին հայերէնով եւ երկրորդը՝ անգլերէնով գրուած գործերու համար:

Այս մրցանակը կը կրէ հայ գրականութեան երախտաւոր, գրաքննադատ եւ «Հայրենիք» օրաթերթի երկարամեայ խմբագիր Մինաս Թէօլէօլեանի ու իր կողակցին՝ հայոց լեզուի և գրականութեան ուսուցչուհի Գոհար Թէօլէօլեանի անունը:

Մրցանակը կը շնորհուի Հիւսիսային Ամերիկա բնակող շնորհալի հեղինակներու: Համազգայինի հիմնական նպատակն է այս մրցանակի միջոցով քաջալերել ու լայն հանրութեան հասցնել հայկական նիւթերու մասին գրող հեղինակներ: Գրութիւնները կրնան ներկայացուիլ գրական որեւէ ձեւով՝ բանաստեղծութիւն, պատմուածք, վէպ, նորավէպ, թատերգութիւն, ինչպէս նաեւ յուշագրութիւն, մտորումներ և գրական վերլուծութիւններ: Նիւթերը կրնան ըլլալ ցարդ անտիպ, կամ տպագրուած 2016-2017 տարիներուն: Մրցոյթը շահող երկու դիմորդներէն իւրաքանչիւրը կը պարգեւուի \$1.500 տոլար:

Դատական կազմի անդամներն են. Դոկտ. Սիմա Աբրահամեան (Մոնթրէալ), Դոկտ. Վարդան Սատթեոսեան (Նիւ Ճրքզի), Պրն. Գուրգէն Արզումանեան (Գալիֆորնիա), եւ Անուշ Ակներեան (Մոնթրէալ): **Մրցանակաբաշխումը տեղի պիտի ունենայ 2018 թ. Հոկտեմբերին:**

**Դիմորդներու (PDF) ստեղծագործութիւնները պէտք է մեզի հասած ըլլան մինչեւ
Ապրիլ 30 2018, հետեւեալ հասցէին. tololyan_award@hamazkayin-usa.org**

Դիմորդները պարտին ամբողջացնել մրցոյթի դիմումնագիրը, որուն հայերէն եւ անգլերէն տարբերակները, ինչպէս նաեւ մրցանակաբաշխութեան կանոնները գետեղուած են համացանցի հետեւեալ էջին վրայ. <http://bit.ly/167vSsM>

Այս մրցանակի նիւթական յատկացումը կ'իրագործուի Սան Ֆրանսիսքոյաբնակ Տէր եւ Տիկին Եղուարդ եւ Վերժին Սարրլեաններու առատաձեռնութեան շնորհիւ:

Համազգայինի Ա.Մ.Ն. Արեւելեան Շրջանային Վարչութիւն